

Հարգելի գործընկերներ, հյուրեր

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն առիթ է մեկ անգամ ևս խոսելու մեր երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ուղղությամբ տարվող աշխատանքների, ձեռքբերումների և, իհարկե, առաջիկա անելիքների մասին:

Ուրախությամբ ուզում եմ փաստել, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ոլորտում մենք շարունակաբար հաջողություններ ենք արձանագրում, որոնց մասին բազմիցս տեղեկացրել ենք: Օրվա խորհուրդը պարտադրում է շեշտադրել ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի մասին մարդկանց իրազեկվածության բարձրացման, վարակի կանխարգելման և արդյունավետ բուժման հարցերը:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2016թ. անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի կողմից ստորագրված Հռչակագիրը մեր առջև խնդիր է դրել մինչև 2020 թվականը հասնել 90-90-90 նպատակներին: Այսինքն՝ ՄԻԱՎ վարակով ապրող մարդանց 90%-ը պետք է իմանա իր կարգավիճակի մասին, նրանց 90%-ը պետք է ստանա բուժում և բուժվողների 90%-ի մոտ պետք է գրանցվի վիրուսային ծանրաբեռնվածության չհայտնաբերվող մակարդակ: Արդյունքում հավակնոտ նպատակը մինչև 2030 թվականը ՁԻԱՀ-ի համաճարակի վերացումն է:

Կայուն զարգացման նպատակին հասնելու համար մենք քայլեր ենք նախաձեռնում միաժամանակ բոլոր ուղղություններով:

Այս առումով ես կարևորում եմ ինքնաթեստավորման մեթոդը ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի Միացյալ ծրագրի աջակցությամբ մեր երկիր բերելու Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությունը: Գաղտնիք չէ, որ վարակակիրների մեկ երրորդը չգիտի իր կարգավիճակի մասին և բուժում չի ստանում: ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման մատչելիության ապահովումը կնպաստի, որ կարճ ժամանակում ՄԻԱՎ-ով ապրող ավելի շատ մարդիկ իմանան իրենց կարգավիճակի մասին:

Մենք պետք է մեկտեղենք մեր ջանքերը, տարբեր կառույցների օգնությամբ մեր խոսքը հասցնենք թիրախային խմբերին: Կարողանանք դրական արդյունքների դեպքում մարդկանց ուղղորդել ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն լրացուցիչ անվճար հետազոտություն անցնելու և հաստատվելու դեպքում բուժում ստանալու համար:

Արձանագրենք, որ ՁԻԱՀ-ի հաղթահարման առաջնագծում կանգնած ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը հաճախակի է ակցիաներ կազմակերպում և մեծաթիվ մարդկանց համար հետազոտություն անցնելու հնարավորություն ստեղծում:

Ներկաներին առաջարկում եմ հանդիպման ավարտին ՄԻԱՎ-ի ու հեպատիտների վերաբերյալ հետազոտություն անցնել Ռուսաստանի Դաշնության կողմից նվիրաբերված շարժական կլինիկայում:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Գլոբալ հիմնադրամին, Ռուսաստանի Դաշնության կառավարությանը, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրին և մեր մյուս գործընկերներին՝ երկրում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդմանն աջակցելու համար: